հեռախասակապի խափանումները վերացնելու ժամկետները խախտելու համար:
5.2.Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում ¤Օպերատոր¤-ից գանձվում է տուգանք՝ խախտում կատարելու ամսվա դրությամբ պայմանագրի գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:
5.3. Սույն պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում <Օպերատոր>-ից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ խախում կատարելու ամսվա դրությամբ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
5.5. <Բաժանորդի> կողմից սույն պայմանագրի 2.4 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում <Բաժանորդի> նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
5.5. <Բաժանորդը> պատասխանատվություն է կրում իր մեղքով ցանցային տերմինալ NETMOD սարքավորման, CDMA համակարգով հեռախոսագծի բաժանորդային տերմինալի, անտենայի կամ <Օպերատորի> սեփականությունը հանդիսացող այլ սարքավորումները վնասելու կամ կորստի դեպքում՝ դրա արժեքի չափով՝ հաշվի առնելով մաշվածությունը:
5.6.<Օպերատորը> պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրի 3.1.5 կետով սահմանված ժամկետների խախտման համար, եթե դրա կատարման անհնարինությունն առաջացել է ոչ իր մեղքով:
5.7.Կողմերը պատասխանատվություն չեն կրում պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար եթե դրանք հետևանք են անկանխատեսելի հանգամանքների (բնական աղետներ, պատերազմներ, ՀՀ նախագահի հրամանագրեր և ՀՀ կառավարության որոշումներ և այլն): Նման դեպքերից որևէ մեկի վրա հասնելու դեպքում, Կողմերն այդ մասին պետք է անմիջապես տեղեկացնեն միմյանց: Եթե անկանխատեսելի հանգամանքների ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավել, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին ծանուցելով մյուս կողմին:
5.8. <Օպերատորը> պատասխանատվություն չի կրում բաժանորդային (վերջնային) սարքավորումների անսարքությունների կամ չսերտիֆիկացված վերջնային սարքավորումների օգտագործման հետևանքով հեռախոսակապի խափանումների համար:
5.9. <Բաժանորդը> պատասխանատվություն է կրում բոլոր այն ֆինանսական և այլ ռիսկերի համար, որոնք կապված են Ինտերնետ ցանցում տեղադրված նյութերը, տեղեկատվությունը, ծառայությունները և ապրանքները/արտադրանքները օգտագործելու արդյունքում ծագած հետևանքների հետ: <Բաժանորդի> չիմացությունը կամ մոլորությունը չի ազատում նրան սույն կետում նշված պատասխանատվությունից:
5.10.Սույն պայմանագրով նախատեսված դրույթները խախտող Կողմը պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5.11. Հեռախոսակապի ծառայությունների մատուցման ընթացքում <Օպերատորի> և <Բաժանորդի> միջև առաջացած վեճերն ու տարաձայնությունները կարգավորվում են բանակցությունների միջոցով, իսկ վերջիններիս անարդյունավետտության դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից, գործում է անժամկետ Կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ և ուժի մեջ է մնում այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից մեկը գրավոր չի հայտնել այն դադարեցնելու մասին: Ընդ որում, պայմանագիրը դադարեցնելու համար <Բաժանորդը> կարող է դիմել ցանկացած ժամանակ՝ այդ մասին <Օպերատորին> նախապես տեղեկացնելու և փաստացի ստացված ծառայությունների դիմաց վճարումները կատարելու դեպքում, իսկ <Օպերատորը> միայն սույն պայմանագրով, Կանոններով և օրենքով սահմանված այլ դեպքերում և պայմաններով, ինչպես նաև սույն պայմանագրի, Կանոնների պայմանները և ՀՀ գործող օրենսդրության պահանջները <Բաժանորդի> կողմից խախտելու դեպքում:
6.2. Սույն պայմանագրի առարկայի շուրջ Կողմերի միջև փաստացի ծագած հարաբերություններից կամ նախկինում կնքված համապատասխան պայմանագրից (երից), բխող ֆինանսական պարտավորությունների կատարումը Կողմերի համար պարտադիր են սույն պայմանագրի շրջանակներում:
Սույն պայմանագրի լուծումը կամ դադարումը կամ կասեցումը հիմք չէ Կողմերի ֆինանսական պարտավորությունների համապատասխանաբար դադարեցման կամ կասեցման: Ֆինանսական պարտավորությունների մասով պայմանագրի գործում է մինչև դրանց ամբողջ ծավալով կատարումը:
6.3. Եթե տվյալ տարում <Բաժանորդի> համար բյուջեով նախատեսվել են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա հաջորդող տարիներին ծառայությունների մատուցումը կիրականացվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Ծառայության մատուցման համար տվյալ տարվան հաջորդող տարում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:
6.4. Սույն պայմանագրի փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքման միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մաս, բացառությամբ սույն կետով նախատեսված դեպքերի: